ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 13-ին, հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, սարկավագության կոչվեց Արմեն Բայադյանը, ով, ավարտելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից լսարանի եռամյա դասընթացը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Գուգարաց թեմ:

Դեռևս 1995 թվականից ի վեր, ինչ վերակազմավորվել էր Գուգարաց թեմը, անգամ սարկավագական ձեռադրություն չէր կատարվել թեմում, և հավաքված հավատացյալների համար յուրահատուկ ուրախություն էր այս արարողությունը, երբ Սրբազան Հոր ձեռամբ «Աստվածային և երկնային շնորհ» էր իջնում իրենց սիրելի սպասավորի վրա, որին վաղուց էին ճանաչում, և հիրավի, սրտաբուխ էր հնչում «Արժանի՛ է» խոսքը:

Հավարտ սրբազան արարողության, թեմակալ առաջնորդն իր խոսքն ուղղեց Արմեն սարկավագին՝ ասելով, որ նա առավել նվիրումով իր սպասավորությունը բերի մեր սուրբ Եկեղեցուն՝ օրինակ ունենալով Ս. Ստեփաննոս Նախասարկավագին, որ լինի քաջ՝ ընդդեմ սատանայի հնարքների, և իր բարի վարքով առավել լցվելով Քրիստոսի սիրով՝ դառնա օրինակ համայնքի համար: Իսկ ներկաներին շնորհավորելով՝ Սրբազան Հայրն իր երախտագիտության խոսքը բերեց Հայոց Հայրապետին այս ձեռնադրության համար: Սեպուհ Սրբազանը հորդորեց առավել սիրել Հայ Եկեղեցին և աղոթել նրա սպասավորների համար, մանավանդ նորոգ ձեռնադրյալ Արմեն սարկավագի համար, որ Տերը արժանի անի նաև քահանայության բարձր կոչմանն ու օծմանը:

Արմեն սարկավագ Բայադյանն այսուհետ իր ծառայությունն է բերելու Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցուն և Քարոզչական կենտրոնին:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՅԱԴՅԱՆ

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 12-ին Կիրովական քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է տեղի թիվ 3 միջնակարգ դպրոցում:

1995 թ. ծառայության է անցել Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցում:

1997-2001 թթ. սովորել է Երևանի «Գիտակ» համալսարանում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

1998-1999 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2002-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. նոյեմբերի 13-ին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ